ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 6

29.10.2024 թվականին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/117-1 գնման պայմանագրի

ք. Մեծամոր «19» Նոյեմբեր 2025թ.

Մեծամորի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար՝ Վ. Խաչատրյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «ՆԱՐ ՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ - «Արտ Պլաս» ՍՊԸ կոնսորցիումը, ի դեմս «Նար Շին Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Գ. Հակոբյանի, ով գործում է ընկերության կանոնադրության և «ՆԱՐ ՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «Արտ Պլաս» ՍՊԸ-ի համատեղ գործունեության 30 սեպտեմբերի 2024թ.-ին կնքված N 03 պայմանագրի հիման վրա, մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 29.10.2024թ. կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/117-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 և 8.8 կետերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի «Ժամկետը**» սյունակում 2-րդ, 3-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով աշխատանքներիի կատարման ժամկետը խմբագրել և ներկայացնել նոր շարադասությամբ հետևյալ կերպ. «...պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 60 օրացուցային օրվա ընթացքում»:

1.2 Պայմանագրի Հավելված թիվ 2-ի և 21.04.2025թ.-ին կնքված Համաձայնագիր 5-ի Հավելված N 1-ի «ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ»-ի «Աշխատանքների կատարման ժամկետը»-ի «Ավարտը» սյունակում նշված «Աշխատանքաների սկզբից 30 օրացուցային օրվա ընթացքում» բառերը 2-րդ, 3-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով փոխարինել «Աշխատանքաների սկզբից 60 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Մեծամորի համայնքապետարան ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1 gnumnermecamor@mail.ru ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ900332239111 ՀՎՀՀ 04440608	«ՆԱՐ ՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ - «Արտ Պլաս» ՍՊԸ կոնսորցիում Արարատի մարզ գ. Շահումյան Գ. Սարգսյան 2., Narshingroup@inbox.ru «Կոնվերս բանկ» ՓԲԸ ՀՀ 1930007956850О ՀՎՀՀ 04250215
Համայնքի ղեկավար՝ ________ Վ. Խաչատրյան /ստորագրություն/ Կ.Տ.	«ՆԱՐ ՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ տնօրեն ________ Գ. Հակոբյան /ստորագրություն/ Կ.Տ.